ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 150-րդ հոդվածի 2-րդ մասով և 99-րդ հոդվածով, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Որոշման նախագծին կից ներկայացում ենք՝ «Իմ քայլը» խմբակցության որոշումն՝ Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու վերաբերյալ և հիմնավորումը:

Նախագծի հիմնական զեկուցողն է Արթուր Հովհաննիսյանը:

Խնդրում ենք ներկայացված որոշման նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՄԱԿՈՒՆՑ**

25.12.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 150-րդ հոդվածի 2-րդ մասով և 99-րդ հոդվածով ՝ՀՀ Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցությունն իր 2020 թվականի դեկտեմբերի 24-ի նիստում

Ո Ր Ո Շ Ե Ց

Հանդես գալ որոշում ներկայացնելու նախաձեռնությամբ եւ շրջանառության մեջ դնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՄԱԿՈՒՆՑ

25.12.2020թ.

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա ԶՈՀՐԱԲՅԱՆԻ լիազորությունները՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՄԻՐԶՈՅԱՆ**

2020 թվական, դեկտեմբերի —

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

(Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագծի)

Հայաստանի Հանրապետության յոթերորդ գումարման Ազգային ժողովի (այսուհետ՝ Ազգային ժողով) պատգամավոր Նաիրա Զոհրաբյանն ընտրվել է Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահ Ազգային ժողովի 18.01.2019 թվականի որոշմամբ:[1]

Հարկ է արձանագրել, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության, ինչպես նաև նրա լիազորությունների դադարեցման հարաբերությունները կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թե՛ ընտրության և թե՛ լիազորությունների դադարեցման գործընթացները գտնվում են բացառապես Ազգային ժողովի խմբակցությունների քաղաքական որոշումների կայացման և Ազգային ժողովի կողմից սեփական գործունեության կազմակերպման տիրույթներում: Այսպես.

1. Մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրվելու համար նախատեսված չեն առանձին պահանջներ կամ չափանիշներ, որոնց պետք է բավարարի թեկնածուն:

2. Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները **դադարեցնելու** համար նախատեսված չեն առանձին հիմքեր, ի տարբերություն օրինակ՝ Ազգային ժողովի պատգամավորի,[2] Սահմանադրական դատարանի դատավորի,[3] դատավորների դեպքում:[4] Ավելին, լիազորությունների դադարեցման (հետ կանչելու) հիմքեր բացակայում են նաև Ազգային ժողովի կողմից իր կազմից ընտրվող Ազգային ժողովի նախագահի և Ազգային ժողովի նախագահի տեղակալների համար: Թե՛ մշտական հանձնաժողովի նախագահի և թե՛ Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների լիազորություններն այդ պաշտոնում դադարեցնելու (հետ կանչելու) դեպքում օրենսդրությամբ պարզապես ամրագրվում է, որ դրա համար պետք է փակ գաղտնի քվեարկությամբ ընդունվի Ազգային ժողովի որոշում, ինչպես նաև

---

[1] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=50831

[2] Սահմանադրության 98-րդ հոդվածի 2-րդ մաս

[3] Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ մաս

[4] Տե՛ս 3-րդ հղումը

սահմանվում է որոշման ընդունման համար պատգամավորների անհրաժեշտ ձայների քանակը:[5]

3. Մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության գործընթացի՝ բացառապես Ազգային ժողովի խմբակցությունների քաղաքական որոշումների տիրույթում լինելը պարզ է դառնում նաև հաշվի առնելով, որ խմբակցությունները կարող են փոխհամաձայնությամբ փոխանակել կամ միմյանց զիջել մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը:[6]

Վերոգրյալից պարզ է դառնում, որ մշտական հանձնաժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնների դեպքում թե՛ սահմանադրի, թե՛ օրենսդրի կողմից արտահայտվել է հստակ կամք՝ ձեռնպահ մնալ այդ պաշտոններում անձանց լիազորությունների դադարեցման (հետ կանչելու) առանձին հիմքեր սահմանելուց, այդ հարցերը թողնելով Ազգային ժողովի խմբակցությունների քաղաքական որոշումների և ընդհանուր առմամբ Ազգային ժողովի կողմից սեփական գործունեության կազմակերպման տիրույթներում:

Չնայած վերոգրյալի, «Իմ Քայլը» խմբակցությունը, հավատարիմ մնալով Ազգային ժողովի գործունեության թափանցիկության ապահովման սկզբունքին, անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հանգամանքներին, որոնցից պարզ է դառնում, որ գործնականում առկա է պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի կողմից Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում հետագա պաշտոնավարման անհնարինություն:

1. Սույն թվականի դեկտեմբերի 17-ին Նաիրա Զոհրաբյանը «Ֆեյսբուք» սոցիալական կայքում կատարել է գրառում, որն իր մեջ պարունակում է նաև հետևյալ հատվածը"

> *«Ես ափում եմ քեզ **ժեխ**, որ իշխանության բերեցիր քո նմանին, ով դանդաղ փակում է մեր պետականության էջը:»:*[7]

---

[5] «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 4-րդ մաս, 149-րդ հոդվածի 3-րդ մաս

[6] «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 5-րդ մաս

[7] https://www.facebook.com/story.php?story_fbid=895255964628129&id=100024312001008

2. Սույն թվականի դեկտեմբերի 22-ին նույն կայքում Նաիրա Զոհրաբյանը կատարել է գրառում, որն իր մեջ պարունակում է նաև հետևյալ հատվածը.

> *«Մեր երկրի թիվ մեկ խնդիրը փգիփությունն է: Նիկոլի ու նիկոլիզմի ավարտից հետո մենք, եթե կուզեք՝ այո,* ***բռնի ուժով պիտի կրթենք նաև հասարակության էդ հատվածին, որ այլևս որևէ ընտրության ժամանակ չգնա ու իր հայելային արտացոլանքին չբերի իշխանության: Ես ժեխին հայրենիք չեմ տալու:*** *Հիմա՛ ես լինելու եմ Հանրապետության Հրապարակում՝ Նիկոլից ու* ***ժեխից*** *իմ հայրենիքը փրկելու համար:* ***Ժեխը իմ երկրում այլևս ոչինչ չի որոշելու****: Ու եթե պետք լինի, այո,* ***մինչև կրթական որոշակի ցենզի հասնելը, ժեխին պիտի զրկել որևէ կարգի որոշում կայացնելու և առաջին հերթին՝ ընտրելու իրավունքից:*** *Ու բռնի ուժով տանել կրթելու: Սա այլև ազգային անվտանգության լրջագույն հարց է:* ***Սա այլևս տեսակի կռիվ է՝*** *ժողովրդի ու ժեխի կռիվ: Ո՞ր տեսակը կհաղթի՝ էնպիսի պետություն էլ կունենանք: Մենք ժեխապետություն չենք ունենալու: Վստահ եղեք:»:*[8]

Պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը բազմիցս հրապարակային հանդես է եկել նույն արժեհամակարգային տրամաբանությամբ:[9]

Սահմանադրության Սահմանադրական կարգի հիմունքները վերտառությամբ առաջին գլխի անփոփոխելի 2-րդ հոդվածով ամրագրվում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Նույն գլխի անփոփոխելի 3-րդ հոդվածով ամրագրվում է.

> *«1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:*
> *2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:*

---

[8] https://www.facebook.com/story.php?story_fbid=898194427667616&id=100024312001008
[9] https://www.facebook.com/story.php?story_fbid=895078827979176&id=100024312001008

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:»:

Սահմանադրության մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները վերտառությամբ երկրորդ գլխի 48-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով համապատասխանաբար ամրագրվում է Ազգային ժողովի ընտրությունների, հանրաքվեների և Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրելու և հանրաքվեին մասնակցելու հիմնարար իրավունքը:

Այսպիսով, Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ վերը հիշատակված գրառումներից և հրապարակային խոսքից պարզ է դառնում, որ պատգամավորի կողմից արվում են Սահմանադրությամբ ամրագրված մարդու՝ որպես բարձրագույն արժեք, անօտարելի արժանապատվությունը ոտնահարող, նվաստացնող և վիրավորանք պարունակող հայտարարություններ, ինչպես նաև Սահմանադրությանը ուղղակիորեն հակասող դասակարգումներ մարդկանց միջև, ավելին՝ այդ դասակարգմամբ պայմանավորելով վերջիններիս Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար՝ ընտրելու իրավունքի իրացումը:

Վերոնշյալն ակնբախ է դարձնում, որ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը չի կարող լինել մի հանձնաժողովի նախագահ, որի գործունեության առանցքը մարդու իրավունքների պաշտպանությունն է: